

ինչ որ արտով զգացամ ու մտքով խորհամ
էր. և. Ալիշանի սպա գրեթէ 100 փոքրա-
դիր էջերէ կազմուած գրութիւնը, իրմէ
կոչուած է ի սկզբան՝ Առժամայն Մտազ-
գեցութիւնք, եւ քսնի մը թուով վերջ մե-
տեւեալ նոր վերնագրով՝ Օրագիր առժա-
մայն ազգմանց մասց եւ ստի. կ'սկսի 1841
տարիէն եւ կը հասնի մինչեւ 1855 թուոյ.
28, երբեմն ընդհատուածիւներով:

Հ. Գ. Չ.

Ա Ռ Ժ Ա Մ Ա Յ Ն

Մ Տ Ա Ձ Դ Ե Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Գ

... 1841-1842 թուոստ.

Ի գիշերի ծնանի ցող յղացեալն ընդ ե-
րեկս եւ մեռանի ընդ առաւօտն:

*

Ի հարսանեաց ծնանին կեանք եւ մահ,
եւ մի քան զմի յառաջիկ փութման:

*

Ձիբ բուռն եւ մեծ քան զմահ, քանզի
հպաւոր է յաւիտենականութեան:

*

Կաթողին սիրեցելոյն հուսկ ապա զինչ
նուիրէ: — Վէմ ցրտին:

*

Դիւրագոյն է ի միտս հպարտութիւն,
այլ իրաւամբ չիբ դժուարին քան զայն:

*

Սպառազէն փաղանգը ամպոց զլուսնով:

*

Որօտ մի ջախջախ կամ փեսուր բաց-
ընկեցիկ եւ երկու կայլակը մեկանի որ-
պիսի խոռով յարուցանեն եւ շարժեն զաշ-
խարհ:

*

Երկու մեծ զրկածութիւնք լինին մաշ-
դոյ. ի ծննդեան բառնայ դայեակն, եւ
յիւս կենացն՝ դայեակ մահուն զնէ ի հող:

*

Տերևախիտ անտառ, ամպ կանաչ ծած-
կեալն զամպս կապուտայինս:

*

Մի՛ գերկրաս փարիս ով մարդ. որ
ստեղծն զքեզ՝ գիրկ մի հողոյ ետ իջա-

նել ընդ խոր, այլ ի բարձրանալ կար-
գեաց ի վերայ քո զանչափութիւն:

*

Աստեղը եւ լուսին շրջէին որպէս հովիւ
եւ հօտ վարատեալ:

*

Աստուած անհաշտ ոտիս է սատանայի,
ապա միշտ բարեկամ է մարդոյ, վասն
որոյ ամենայն ոք իրաւունս ունի խնդրել
շնորհս:

*

Քրիստոս յառաջնումն ջրով եկն, յեր-
կորդումն զայցէ հրով. եղի առաջի քո
հուր ջուր. զորս ոչ միեցան ջրով՝ դա-
տեսցէ հրով:

*

Է սիրտ որ իբրեւ սպունգ ջրալից՝ ի
հպել ուրուք եւ մատամբ՝ բղիճ զարտա-
սուս, եւ է որ որպէս զժայռ կարծրակուռ,
թէպէտ եւ յար ի ջրի կայ, ոչ երբէք լու-
ծանի:

*

Գայթակոտ ոտին եւ քար մի դաւադիր:

*

Ոսկի եւ զոհար, շարաւ քարանց եւ
կղզիանք հողոյ:

*

Ամենայն ինչ կամ ի սէր Աստուծոյ
գործի կամ անձին. կրկին սոքա ծայրք
են լծակի մարդկային կենաց, անմարթ է
չհակել միոյն ի համբառնալ միւսոյն, եւ
որով չափով ամբառնայ մին, նովին միւսն
խոնարհի:

*

Ի մէն մի շնչառութեան իմում՝ մեռանի
մէն յիմոց նմանեաց: Եւ ի ձգել անդ
զառաջին շունչ նորածնի ուրուք՝ զյե-
տին ես շնչեցից զիմ:

*

Հոգին Աստուծոյ թեատարած շրջէր ի
վերայ անդնդոց, զի ընդարձակ խնդրէ
վայր եւ թափուր զի լցցէ պարգեօք իւ-
րովք. այսպէս եւ յանապատս դեգերէր առ
միանձունս, եւ սիրտս անապատացեալս
սիրէ ի կենցաղոյս հոգոց:

Շարաշարիկ